

ՅԱԿԵԼՈՒԱՆ՝ «ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՀԱՆԴԻՍԻ»

Ծ Ր Ա Գ Ի Ր

Հ Ա Յ Ո Ց

ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ

Հ Ա Մ Ա Ր

ՆԻԻԹԵՐ ՀԱՒԱՔԵԼՈՒ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Թ Ի Ֆ Լ Ի Ս

Ելեքտրաշարժ տպարան. «Հերմես» Ընկ. Մաղաթ, փող. № 5-

1907

(249)

ՀԱՅՈՑ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ

Դնկաս առնելով այն ահագին նշանակութիւնը, որ ազգագրական թանգարանը ունի թէ՛ մի ազգի ինքնուրոյն զարգացումը եւ թէ ընդհանրապէս մարդկութեան էվոլիւցիան բնորոշելու համար՝ անհրաժեշտ է որ հայերս էլ ունենանք մի այդպիսին, եւ այն կարելոյն չափ շուտ, որովհետեւ այժմ չափազանց արագ կերպով փոխւում է հայկական կեանքը եւ կորչում են ազգագրական իրերը:

Այսպիսի մի պատուաբեր պարտականութիւն, բնականաբար, ընկնում է Հայոց Ազգագրական ընկերութեան վրայ, ուստի եւ վերջինս՝ Տալով ներկայ ծրագիրը, որ Ա. Տէր Գրիգորեանը փոխադրել է Պետերբուրգի Աղէքսանդր Գ-ի Ազգագրական թանգարանի համար կազմած ծրագրից, խնդրում է առանձնապէս իւր տեղական նիւղերին եւ ընդհանրապէս ամէն մի հայի՝ նպաստել իրեն այս պարտականութիւնը կատարելու:

Անհրաժեշտ է, որ ընկերութեան ամէն մի նիւղը հիմնէ մի պահեստարան, ուր ամենայն խնամով հաւաքէ իւր շրջանի ազգագրական եւ հնագիտական իրերը, մինչեւ որ ամբողջ ընկերութեան ջանքով ու միջոցներով կը հիմնուի մի հայկական ազգագրական թանգարան, ուր յետոյ կը տեղափոխուեն բոլոր նիւղերի հաւաքած իրերը:

Հ. Ա. Ը. ԽՄԲ. ՄԱՍ.

ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԱԾՈՒՆԵՐ ՀԱՒԱ- ՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԸՆԴՀԱՆՐԱՊԷՍ

Ազգագրական ժողովածուներ կազմելու սոյն ընդհանուր նկատողութիւնը վերաբերում է գլխաւորապէս այդ գործի տեխնիկային բոլորովին անծանօթ մարդկանց:

Կարելի է որպէս ընդհանուր կանոն ընդունել՝ որ պէտք է հաւաքել թէ՛ նիւթական և թէ՛ հոգեկան կեանքի ու նիստ ու կացի բոլոր պիտոյքները—չէ՞ որ հոգեկանն էլ յաճախ արտացոլում է նիւթական իրերի վրայ: Ժողովրդական շատ սովորութիւններ ու արարողութիւններ այնքան սերտ կերպով կապւած են բազաքակրթութեան նիւթական յիշատակարաններին—իրերի հետ՝ որ նրանց նշանակութիւնը բացատրելու համար անհրաժեշտ է գիտենալ թէ ժողովուրդն ինչպէս է նայում այդ բանի վրայ և թէ ժողովրդական ստեղծագործութեան մէջ թիւ հայեացք է պահպանուել այս կամ այն իրի մասին: Ուստի՝ խիստ ցանկալի է, որ գրի առնուեն ժողովրդական ստեղծագործութեան մնացորդները—հեքիաթները, երգերը, աւանդութիւնները, առակները, հանելուկները և աղօթքները:

Թանգարանի համար ձեռք բերած ամեն մի իր մի դոկումենտ է, որը կարող է ընտրոշել մեզ հետաքրքրող ժողովուրդն ու նրա ստեղծագործութիւնն այս կամ այն կողմից: Պէտք է սակայն գիտենալ՝ որ ժողովրդի ձեռակերտ ամեն մի իրն էլ անպայման ազգագրական նշանակութիւն չունի, այլ՝ միայն նրանք՝ որոնք ծառայում են հէնց իւր, ժողովրդի կարիքներին: Օրինակ՝ գիւղացու՝ յատուկ պատուէրով պատրաստած ուսսօրի կառքը կամ մարմարոնեայ վազը չեն կարող ազգագրական թանգարանի նիւթ ծառայել: Այդ տեսակ իրերը նշանակութիւն ունեն արդիւնագործական մուգէի համար, ուր գլխաւոր դերը խաղում է մթերքների արտադրումն ու նրա զարգացումը: Ահա թէ ինչպէս ամեն մի իրի համար պէտք է ցոյց տուած լինի թէ մրտեղ է գտնւած (գիւղը, գաւառը, նահանգը), եթէ հնարաւոր է՝ պէտք է նոյնիսկ յիշել թէ՛ իմ է պատկանել այդ իրը, ի՞նչ է նրան շինող վարպետը: Իսկ եթէ իրը բերած է դրը-

սից՝ անհրաժեշտ է յիշել այդ տեղի անունը: Անհրաժեշտ է նոյնպէս նշանակել թէ իրը պատրաստուած է միայն սեփական գործածութեան համար, որն է մէկի պատուէրով, թէ՛ շուկայի համար: Անհրաժեշտ է ճշտութեամբ հաղորդել ամեն մի իրի իսկական տեղական անունը, կամ եթէ իրը բարդ է՝ նշանակել նրա ամեն մի առանձին մասի անունը:

Գինու. ժամանակ միշտ պէտք է գերադասութիւն տալ արդէն գործածութեան մէջ եղած առարկային նորից, կամ մանաւանդ՝ հաւաքողի յատուկ պատուէրով պատրաստածից, թէև ի հարկէ՝ բոլորովին խուսափել այդ բանից անկարելի է: Մի բանի իրեր, ինչպէս օր. բնակարանների, կոթերի, նաւակների և այլ մօտէլներ, միայն յատուկ պատուէրով կարելի է պատրաստել տալ: Ժողովրդի ձեռակերտի նմուշներ, օր. թաղիք, մահուդ, փայտի կերտըւածներ, ասեղնադործներ, ժանեակներ ցուցադրելիս՝ պէտք է ցուցադրել նաև նմուշներ այն հուս նիւթերից ու գործիքներից, որոնք գործածուած են արտադրութեան միջոցին, նաև՝ օժանդակիչ իրեր՝ ներկեր և այլն:

Ժողովածուներ (կոլլեկցիաներ) կազմելիս՝ պէտք է ըստ կարելւոյն նրանց կցել իրերի մանրամասն ցուցակը համարներով, ըստ որում ամեն մի առարկայի վրայ պիտի նշանակւած լինի համապատասխան համարը, (կամ ամեն մի առարկային կպցրած լինի համարանշանը):

Եթէ մի առարկայի վրայ չէ նշանակւած նրա ծագումը՝ չի կարող ազգագրական դոկումենտ լինել, որովհետև այդ դէպքում ստիպւած կլինենք ուրիշ առարկաների օգնութեանը դիմել, որոնց ծագումը պէտք է անպայման ճիշտ որոշած լինի:

Ի վերջոյ՝ մնում է ցանկութիւն յայտնել՝ որ ամեն մէկն ով որ նպատակ ունի պարբերաբար կոլլեկցիաներ կազմել կամ առաստաղի՝ ազգագրական նիւթեր հաւաքել՝ իր աշխատանքների համար օրատետր ունենայ՝ ուր մտցնէ որոշ տեղի կեանքի մասին ունեցած բոլոր ցուցմունքներն ու տեղեկութիւնները՝ որոնք կը յաջողուի հաւաքել դիտողութիւնների կամ հարցուփորձի միջոցով, որովհետև այդպիսի մի յուշատետր մեծ ծառայութիւն կարող է մատուցել ապագայ ուսումնասիրողներին:

1.

ՇէնեՐ, ՇԻՆՈՒԹԻՒՆՆԵՐ, ԲՆԱԿԱՐԱՆ ԵՒ ՆՐԱ ՊԱ-
ՐԱԳԱՆԵՐԸ

Այս բաժանմունքի մէջ կը մտնի, ըստ կարելւոյն, մարդկային

բնակատեղիների տիպերի մանրամասն նկարագրութիւնը, որոնք կը պատահին մեզ հետաքրքրող տեղում, ինչպէս օր. տունը, խրճիթը, հիւղը և այլն. նաև՝ տնտեսութեան համար անհրաժեշտ և անասուններ կամ կենսական մթերքներ, կամ մարդու զանազան ունեցուցքները պահելու համար կառուցած գոմը, պարիսպը (աղբւր), ամբարը, մարանը, սառցարանը, կալը, խոտնոցը, մարագը, հացի հորը և այլն, և այլն: Պէտք է նկարագրել նաև՝ զանազան մթերքների ու նիւթերի մշակութեան համար կառուցած յատուկ շինութիւնները—ջրաղացը, ձիթահանքը, դինգը... բացի այդ, այս բաժնում կլինի նաև բաղանիքի, ջրհորի, բակի, ցանկապատի, այգու, գերեզմանի շէնքեր և մահարձանի տիպերի նկարագրութիւնը:

Մանօրութիւն. Այս բաժանմունքի նիւթերին որպէս իր լիւստրացիա ցանկալի է ունենալ 1) խոշոր շինութիւնների՝ խրճրթի և այլն մէկ տաաներորդի մեծութեամբ պատրաստած մօդէլները, 2) լուսանկարներ, 3) մակարդակներ, պլաններ և նկարներ՝ հէնց թէկուզ՝ ձեռքով պատրաստած: Ցանկալի է ունենալ ընտանեկան տնտեսութեան համար հարկաւոր իրերի լիակատար ժողովածուն:

1. Ինչպէս է ապրում որոշ տեղի ազգաբնակչութիւնը.—մեծ գիւղերով, փոքր գաղութներով, թէ՛ առանձին ագարակներով:

2. Գիւղի արտաքին տեսքը (լուսանկար)—կազմել աչքի չափով գիւղի պլանը հետեւալ ցուցմունքներով.—գլխաւոր փողոցների ուղղութիւնը, հրապարակների դիրքը, աչքի ընկնող շինութիւնները՝ հասարակական ամբարը և այլն: Յոյց տալ կալերի, այգիների, պարտէզների տեղն ու դիրքը:

3. Ունեւոր, միջակ և չքաւոր տան պլանը, այդ տանը պատկանող միւս շինութիւնների փոխադարձ դիրքը և մօտաւորական չափը:

4. Եթէ միևնոյն տեղում (գիւղում և այլն) զանազան տիպի շինութիւններ կան,—այդ ինչով պիտի բացատրւի: Արդեօք դա տանտիրոջ հարստութեան հետեւանքն է, թէ՛ բնակչութեան՝ տարբեր ցեղերի պատկանելու հետեւանքը: Արդեօք ճրջան է նկատելի մի ժողովրդի միւսից կիրառած բնորոշ գծերը՝ բնակարանի վերաբերմամբ (լուսանկար):

5. Բնակարան, նրա չափերը, (ամենամեծ և ամենափոքրը) նրա շէնքը: Զանազան բնակարանների լուսանկարները, պլանը և մօտաւորական կամ ճիշտ չափը: Արդեօք խրճիթների զանազան տիպերի համար յատուկ անուններ չկան:

Սրճթի դիրքը փողոցի և հորիզոնի կողմերի նկատմամբ:

Արդեօք բնակարանի պատուհանները դէպի փողոցը կամ ընդհակառակը՝ (ինչպէս յաճախ նկատուում է մալօրօսսիայում և՛ արևելքում)՝ բնակարանը ամբողջովին բակում, իսկ միւս շինութիւնները փողոցի կողմը տեղաւորելու ձգտում չի՞ նկատուում, այնպէս որ՝ փողոցը ծայրից-ծայր անցնելով չը պատահենք և ոչ մի շինութեան՝ ուր մարդ ապրէր։ Արդեօք ձգտում չկայ։ շինութեան պատուհանները դէպի հարաւ անելու։

Ի՞նչպէս և երբ (ամենալաւ ժամանակը-զանազան նշաններից իմանալով) է շինուում բնակարանը և ով է շինում։ Նա, ով պէտք է ապրի այդ բնակարանում իր համագիւղացի հարևանների օգնութեամբ, թէ՛ վարձկան բանւորների օգնութեամբ։ Ի՞նչպէս են ընտրում բնակարանի տեղը, ի՞նչպէս են սկսում, ի՞նչպէս են շարունակում և ի՞նչպէս վերջացնում—մի խօսքով՝ բնակարանի շինութեան համար անհրաժեշտ բոլոր աշխատանքների նկարագրութիւնը։ Շինութեան ժամանակ գործ դրած տեխնիքական ձևերը։ Նշանակել աշխատանքի առանձին մօմենտների ժողովրդական անունը (տաշել և այլն), նաև՝ շինութեան միջոցին գործածուող գործիքներն, ու հնարները։ Շինութեան նիւթը։ Ուշադրութիւն դարձնել սիւների բարձրութեան վրայ՝ եթէ շինութիւնը սիւների վրայ է հաստատուում, սիւների ի՞նչ խորութեամբ թաղած լինելը, նրանց փթելուց ազատ պահելու միջոցները։ Պատուհանների բարձրութիւնը գետնից։ Ի՞նչպէս է շինուում խճթի յստակը, եթէ տախտակից՝ արդեօք յատակի և գետնի մէջ եղած տարածութիւնը տնտեսութեան կարիքների համար չի՞ գործածուում։ Արդեօք մի՞ շրջանակի վրայ է ամրացւում խճիթը (խճթի կտուրը) թէ՛ միջանի կցուած շրջանակների։ Ձմեռւայ և ամառւայ խճիթներ—նրանց տարբերութիւնը։ Արդեօք խճիթների համար չկան յատուկ անուններ և այդ անունները կախուած չեն նրանց մէջ տեղաւորւած բնակարանների ու որոշ կարիքների համար յատկացւած մասերի այս կամ այն դերից։

Պատուհանների, դռների, սանդուղքների շինութիւնը, լիակատար տեղեկութիւններ՝ նրանց չափի, ձևի, դիրքի, գերի և այլ մասին։ Փակիչների, աղիների, չըխկերի շէնքսը։ Ի՞նչպէս են շինուում առաստաղն ու կտուրը.—նիւթը, ձևը, թեքութեան չափը—այսելով նիւթին, բոլոր մասերի անունները, ծածքի ձևերը և տարբերութիւնը՝ տեղական պայմանների համեմատ։ Արդեօք առաստաղի և կտուրի մէջ եղած տարածութիւնը, «առիքը» տընտեսական զանազան նպատակների չի՞ ծառայում։ Կտուրին կից արդեօք ուրիշ շինուածքներ չկան, ինչպէս օր. աղանիւնների բնիւր և այլն։

Խորհիթը տաքացնելու և խոնաւութիւնից ազատ պահելու միջոցները: Այդ նպատակի համար մամուռի գործածութիւնը: Արդեօք ճեղքերը կաւով չեն ծեփում (դրսից ու ներսից ծեփած ու չը ծեփած խորհիթներ): Փեղկեր, ծղօտի վարագոյրներ պատուհանի համար, վարագոյրներ՝ քամու կողմի պատերի համար:

Օջախի կամ վառարանի ձևեր: Խորհիթ՝ առանց ծխնելոյղի— ծխով տաքացող: Վառարանի և նրա մասերի մանրամասն նկարագրութիւնը՝ առանձին անուններով: Վառարանի չափը, մեծութիւնը, յատակագիծը (պլանը): Վառարանի տակ դատարկ մնացած տարածութեան դերը և գործածութիւնը: Ծխնելոյղ: Խողովակ (труба) և նրա ձևը, հրակ, կրակ անելու և պահելու ձևը: Վառարանը վառելու ձևը: Վառելիք՝ փայտ, ծղօտ, աթար և այլն:

Մանօրութիւն. էանօգրաֆի (ազգագրագէտի) համար խիստ կարևոր է իմանալ՝ թէ Բնչպէս է անուամ կրակը և Բնչպէս է պահուում նա: Ուշտի՝ խիստ կարևոր է ճիշտ ցուցմունքներ՝ ա) կրակ անելու միջոցները (փայտերն իրար քսելով, կայծաքարերով, լուցկիով և այլն), բ) կրակը պահելու (տան մէջ, դուրսը, դաշտում) և նրանից օգտուելու ձևերը (թոնիրներ, պղնձի համար եռոտանիներ և այլն), գ) արդեօք այնպիսի դէպքեր չկան, երբ անհրաժեշտ է համարուում կենդանի (այսինքն՝ քսելու միջոցով) կրակ անելը: դ) Կայծակի կրակը և վերաբերմունքը դէպի նա: Կրակ անելու համար գործածւող հնարներն ու գործիքները: Կրակ անելու համար Բնչպիսի փայտ է գործածւում, Բնչ ձևի և այլն: Մծումը և այլն:

6. Բնակարանը դրսից զարդարելու ձգտում: Սպիտակեցնում են կաւիճով: Ներկում զանազան գոյնի կաւով: Փեղկերի և դռների ներկը: Քանդակած զարդեր—աքաղաղներ, փղքրիկ ձիեր, պատուհանների, դռների, կարնիզների քանդակը:

Մանօք. Զարդարանքների ու քանդակների ըստ կարելոյն լիակատար օրինակներ հաւաքել:

7. Խորհիթի ներքին կազմը, խորհիթի և նրա զանազան անկիւնների ներքին տեսքը (լուսանկար): Պատկերներ (հին, նոր) զարդեր: Կարողաւոր, միջակ և չքաւոր ընտանիքի կարասիքը, սեղաններ, աթոռներ, նստարաններ, յարմարութիւններ՝ քնելու համար—մահակալներ, թախտեր, «տառապաններ» (ПОЛЪТ): Պահարաններ, դարակներ և այլն:

8. Ընտանեկան պիտոյքներ—տակառ, վեղրօ, ճակկալ, թի, մաշա, և այլն: Ամաններ՝ գուշ, քարղան (քրիղան), «մօրշօբա», մաղ, գդալ, դանակ, գդալնոց, պատառաքաղ և այլն:

9. Խորհիթի լուսաւորութիւնը: Լուսաւորութեան միջոցներ,

սրանց պատրաստութիւնը և գործիքներ (մարխը և նրա գործածութեան ձևը):

10. Տնտեսութեան շինութիւններ և նրանց մօդէլները (լուսանկարներ) մարագ, աղբիւ և այլն: Բաղանիք և նրա կազմութիւնը—արտաքին և գլխաւորապէս՝ ներքին: Կալը և նրա դիրքը միւս շինութիւնների վերաբերմամբ: Նրա մասերի դիրքը, կալի պատրաստելը—լէնչպէս և լէնչ նիւթերից (ջուր ցանել, դարման շաղ տալ և այլն): Կալ բանալու գործիքներ: Ամբարը և նրա ձևը,—բարձրութիւնը: Խոտնոց: Դոմ և նրա շէնքը: Խոզանոց: Թռչունների համար յատուկ շինութիւններ—հաւնոց և այլն: Յատուկ շինութիւններ ու յարմարութիւններ—օր. ջրաղաց և հողմաղաց, փեթկընոց, ծխախոտ, կաւ և այլն չորացնելու յարմարութիւններ: Ներքնատուն (նկուղ) և սառցարան, սրանց մեծութիւնը, խորութիւնը և ներքին կազմը: Հացի հորեր և նրանց շէնքը—խնչպէս են շինում պատերը և այլն:

11. Յանկապատ փողոցի վրայ: Դարպաս, նրա մասերը, շինութեան ձևը և նիւթը: Պարիսպների զանազան տեսակներն ու ձևերը: Այս նիւթերին վերաբերեալ նկարներ անուններով, և այլն:

II

ՀԱԳՈՒՍՏ ԵՒ ԶԱՐԴԵՐ

Այս բաժնի մէջ կը մտնի բոլոր այն առարկաները՝ որոնց մարդը գործածում է իր մարմնի բոլոր մասերը ծածկելու համար գլխից սկսած մինչև ոտքերը և մանկան աշխարհ գալուց մինչև մեռելի թաղումը, նաև՝ այն իրերը՝ որոնք որոշ բանի համար նշանակաւ չլինելով զարդի տեղ են ծառայում: Այստեղ կարող են մտնել նաև այն առարկաները, որոնք մարդու համար պէտքական են այս կամ այն կերպով—հիւանդութիւններից պահելու, չար աչքից ազատելու, երջանկութիւն բերելու, որսի ժամանակ՝ յաջողութիւն, կռուի ժամանակ՝ ոյժ տալու, դժբախտութիւններից փրկելու և այլն, և այլն:

1) Խնչպէս են հագցնում երեխին ծնուելուց անմիջապէս յետոյ: Ի՞նչ են ծածկում նրա գլխին, լէնչ են հագցնում մարմնին, փաթաթում են և այլն և այլն (երեխի հագուստների ձևերը):

2) Յետագայում լէնչ բաներ են աւելանում մանկան հագուստներին և ձր հասակում: Մանկական հասակի զարդերը: Երեխաներն ինչից են պատրաստում իրանց ձեռքով շինած խաղալիքները:

3) Տղամարդոց հագուստը: Շապիկ, վարտիք, սրա ձեւը, կոճակներ կամ նրանց փոխարինող յարմարութիւններ: Ամառայ հագուստ, գլխարկ, (ծղօտի և այլն), քէշաւ Ի՞նչ են փաթաթում վիզը: Ի՞նչպէս են հագնում շապիկը (շալարի մէջ դրած թէ՛ արձակ): Ջանազան տեսակ գոտիներ՝ սկսած թոկից մինչև լայն՝ գունաւոր գոտիները. դրանց անունները: Ժիւետ, Վերեի հագուստը և նրա անունը—չուխա, արխալուխ, Ֆէրէճիկ և այլն: Ոտնաման.—գուլպա, չուստ, տրեխ, կօշիկ, և այլն: Զմեռայ հագուստ.—գլխարկ, շարֆ, քուրք, եսփունջի, և այլն: Զարդեր: Ամենագործածական գոյները—շապիկների, հագուստների, գլխարկի և այլն:

4) Կանացի հագուստ: Դիւարկներ և զարդեր, մագերի սանրուածք: Աղլուխներ և նրանցով գլուխը կապելու ձեւերը—տօներին ու լի օրերին.—(Լուսանկարներ): Թարմ ծաղիկներով գլուխ զարդարելը (Բնչ ձևերն են դերադասուում), պտուղներով, տերեւներով և պսակներով գլուխ զարդարելը, ձևերը: Առանձին ուշադրութիւն դարձնել՝ թէ Բնչ տեսակ պսակներ են շինուում հունձի ժամանակ: Պսակներ՝ արհեստական ծաղիկներից: Ժապաւէշներ և այլն: Տօնային գլխարկ: Նորահարսի գլխարկը: Գլխարկներ՝ նայելով թէ կինն Բնչ հասարակական դիրք ունի,—աղջիկ, ամուսնացած կին, պառաւ: Երեսը ներկելու դեղեր և նըրանց պատրաստութիւնը: Ե՞րբ, Բնչ դէպքերում են երեսները կամ մարմնի որեւէ մասը ներկում: Դիւղական կոսմետիկան,—սիւրմա, երեսի բծերը վերացնելու դեղեր, մագ երկարացնելու կամ ամբացնելու միջոցներ: Մանեակ և օդ.—ինչից են պատրաստուում սրանք: Մատանի և լապարանջան: Շապիկ, նրա ձեւ և զարդարանքները, վիշիվկաներ և այլն: Վերեի հագուստ: Կանացի բաճկոն—նրա տեսակները և ամեն մի տեսակի անունը, միւսներէից տարբերող նշանը: Հագուստների ամենագործածական գոյները: Գոգնոց, քուրք և այլն: Ջանազան տեսակ գոտիներ, նրանց գործածութիւնը և անունը: Զմեռայ հագուստ: Ոտնամաններ.—տրեխ (կաշուց, ծառի կճեպից և այլն) կօշիկներ, չուստեր և այլն:

(Առհասարակ աւելի լաւ է հագուստները հաւաքել այսպէս, լի օրուանը, տօն օրուանը, ամառուանը, ձմեռուանը, աղջկայ հագուստը, նորահարսի հագուստը, ամուսնացած կնոջ հագուստը):

Ամեն մի իրի հետ՝ ցոյց տալ նրա նիւթը (աւելի լաւ է՝ կցել նաև նմուշներ), գոյնը, ընդունւած գոյների միաւորումը և եթէ հնարաւոր է՝ նշանակել թէ ամեն մի հագուստեղէնը աշխարհագրական որ տեղերում է տարածւած:

Առհասարակ՝ ցանկալի է որքան հնար է շատ նկարներ, պատկերներ, օրինակներ, նախշեր և լուսանկարներ ունենալ:

5) Պրոֆեսսիօնալ հագուստներ.—ձկնորսի, որսորդի, դարբնի, պայտառի,—դրանց գործիքները: Հաւաքել հագուստների, զարդարանքների և առհասարակ հագնելիքների իսկական նմուշներ:

Մանօրուքիւն. Յոյց տալ հագուստի մօդայի յատկանիշը.—նշանակել հին մօդայի ու նորի տարբերութիւնը ձևի և զարդարանքների վերաբերմամբ: Յատուկ ուշադրութիւն դարձնել հագուստի ձևի վրայ: Լայն և նեղ կտորից արւած ձևերը տարբեր են: Ձևելու ժամանակ գլխաւոր նպատակը—որքան կարելի է քիչ նիւթ կորցնել և մանր կտորներ չանել:

III

ՏԵԽՆԻԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿԵՆՑԱՆԻ ՄԷՋ

Տեղական արտադրութեան տեսակներն ու հում նիւթի մշակութեան ձևերը: (Այս բաժանմունքի շատ մասերը մտել են միւս բաժանմունքները, ինչպէս օր. շինութիւնների բաժանմունքը: Այս բաժանմունքում սակայն՝ մի քանի մասերն աւելի մանրամասն են մշակւած, քան միւս բաժանմունքների համապատասխան տեղերում):

Նկատողութիւն. Բացի գործիքներից և զանազան տիխնիքական յարմարութիւններից՝ պէտք է հաւաքել թէ հէնց կերտուածների նմուշները և թէ հում նիւթի նմուշները մշակութեան զանազան աստիճաններում, ի հարկէ՝ ըստ կարելոյն:

1. Քարի մեակութիւնը. Արդեօք մեղ հետաքրքրող տեղում քարից շինուած են զանազան իրեր թէ ոչ: Քարի լինչ տեսակներ կան և ինչի՞ համար են գործածուում: Ո՞րտեղ և լինչպէս են հանում քարը: Արդեօք քարը մշակում են տեղնուտեղը թէ՞ դրա համար տանում են յատուկ նշանակւած տեղեր: Քարը կրելու լինչ ձևեր ու յարմարութիւններ կան: Մշակութեան ժամանակ լինչ գործիքներ են բանեցնում: Տալ այդ գործիքների նմուշները կամ գոնէ նրանց մօդէլը (նկարը, լուսանկարը, ճիշտ նկարագրութիւնը՝ չափի և անուան ցուցմունքներով՝ եթէ անհնար է իսկական գործիքը տալ): Ամբողջ տեխնիկայի ճիշտ նկարագրութիւնը.—Քարից պատրաստուող իրեր.—Նրադացքար, յետան, սանդ և այլն:

2. Ոսկորի եւ եղջիւրի մեակութիւնը. Նախնական մշակութիւն.—ոսկորը մաքրել—դրա համար լինչ միջոցներ են գործադրուում: Մշակութեան ժամանակ գործածուող գործիքները: Ի՞նչ

իրեր են շինում եղջիւրներից.—սաւնը և այլն, Ի՞նչ իրեր են շինում ոսկորից.—կոճակ, գդալ, արկղիկներ, խաղալիքներ և այլն: Ոսկորն ու եղջիւրն արդեօք նաշխեր շինելու համար գործածվում են թէ ոչ:

3. Փայտի մեակութիւնը: Զանազան նպատակների համար գործածւող փայտի տեսակները: Ի՞նչպէս են որոշում ծառի բարձրութիւնը և առհասարակ նրա որակը: Ի՞նչպէս են կտրում ծառը, Բնչպէս են մշակում հէնց տեղում և Բնչպէս են տեղափոխում: Տարւայ ձր ժամանակը: Ի՞նչպէս են կտրում ծառը, Բնչպէս են մշակում հէնց տեղում և Բնչպէս են տեղափոխում: Տարւայ ձր ժամանակը: Ի՞նչպէս են տաշում և սղոցում շինութիւնների համար գործածելիք փայտը: Փայտի մշակութեան մէջ գործածւող գործիքները.—կացին, պուրդի, դուր, սղոց, չիվի և այլն: Գործիքների նմուշներ կամ մօդէլներ.—Բնչ չափ ունեն և Բնչպէս են կոչւում: Անիւի կամ տակառի շրջապատի պատրաստութիւնը:

Տակառագործութիւն իբրև յատուկ արհեստ: Տակառագործի գործիքները: Տակառագործութեան համար անհրաժեշտ փայտի ընտրութիւնը: Խոր գործելը (խտր գործելու դազգահը կամ նըրա մօդէլը): Տրեխ, տրեխ գործելն ու կարելը: Կուպրի և ձիւթի պատրաստութիւնը: Ածուխ և նրա պատրաստութիւնը:—Մանրամասնորէն նկարագրել աշխատանքի ընթացքը:

Փայտից պատրաստւող իրեր: Տալ գործիքները և տեխնիկայի մանրամասն նկարագրութիւնը:

Մանրութիւն. Գործիք պէտք է համարել հէնց թէկուզ ամենասովորական փայտի կտորը, եթէ գործ է ածւում աշխատանքի ժամանակ:

Քանդակների համար գլխաւորապէս Բնչ փայտ է գործածւում:

Անիւների պատրաստութիւնը: Այս աշխատանքի մէջ գործածւող յարմարութիւններն ու գործիքները: Մակել և տաշելը: Շըրջանակների (ՕԵՕԴԵ) պատրաստութիւնը.—նիւթը, փայտի փափկացնելը (դրա համար շինւած յատուկ յարմարութիւնները. ճիշտ նկարագրութիւնը լուսանկարներով, նկարներով և ուրուագծերով, պղնձի տեղը, տաքացնելը, աշխատանքի ընթացքը): Շրջանակները ճաղերի վրայ քաշելը (որքան հնարաւոր է՝ շատ տալ լուսանկարներ, նկարներ, պատկերներ,—որոնք կարողանային լուսաբանել արտագրութեան զանազան մօմենտները):

Պառատի (ճախարակագործի) գործիքները, դազգահը, անիւներ, ճախարակի պատրաստութիւնը, դարգարանքներ: Մամ (աղեղ) և նրա պատրաստութիւնը: Մամի ներկելը և զարդարանքները:

Կառու մեակութիւն: Մեզ հետաքրքրող տեղում թնչ կենդանիների կաշիներ ու մորթիներ են գործածուում և ինչի համար: Մորթին հանելու ձևեր ու գործիքներ: Մորթին մաքրելու եղանակը և գործիքներ.—ցամաքեցնելը, թրջելը և այլն: Աշխատանքի ընթացքի նկարագրութիւնը, այդ դէպքում գործածուող նիւթերը (թթուեցրած կաթի, ծառի կեղևի գործածութիւնը): Բոլոր աշխատանքների ժողովրդական անուններն ու գործ դրուող գործիքները: Կաշու ներկելը: Կաշու մշակութիւնը դանազան նպատակների համար: Հաւաքել նմուշներ: Առանձին արհեստների մասնաճամբան նկարագրութիւն, օր. կօշկակարութեան և այլն:

5. Մետաղների մեակութիւնը: Տեղական դարբիններն թնչ իրեր են շինում, թնչ իրեր են գնում և ձրտեղ: Դարբնութիւնը: Դարբնանոցը—սրա լուսանկարը, ուրուագիծը և ներքին կազմութիւնը.—վառարան, փուքս, զնդան և այլն: Մանրամասն նկարագրել դարբնութեան տեխնիկայի բոլոր առանձին մասերը—(սառեցնելը, տաքացնելը, հարթելը և այլն): Գործիքներն ու յարմարութիւնները: Այս նիւթին վերաբերող բոլոր անունները թուել: Դարբնանոցի մօտի տեսարանների լուսանկարները—ձիու պայտելը, դազգահի մօղելը—եթէ այդպիսին գործ է ածուում, գործիքներ, պիտոյքներ, իրանց ճիշտ անուններով (միսերի անունները): Կացնի, գերանդու, անիւի պատրաստութիւնը:

Համագիւղացիների վերաբերմունքը դէպի դարբինն ու նրա արհեստը: Ուրիշ մետաղների մշակութիւնը: Մետաղներից իրեր ձուլում են թէ՛ ոչ: Ինչպէ՞ս են գործածուում հանքերը և թնչ հանքեր: Ոսկերչութիւն: Ոսկու և արծաթի իրերի պատրաստութիւնը: Գործիքներ ու տեխնիկայի եղանակը: Արդեօք չկան աչքի ընկնող երևոյթներ, օր. փայտը ոսկեջրելու ժամանակ չին գործածուում հօտած ձու: Նաշխր և նրա տեխնիկան:

6. Կաւի եւ ուրիշ հաճախեց ցիւրերի մեակութիւնը: Բրուտը և նրա արհեստը: Կաւ հանելը: Կաւի տեսակներն ու տեղական անունները: Կաւի հաւըրեցնելը, արդեօք կաւը մաքրում են թէ՛ առանց մաքրելու են գործածում: Գործիքներ: Բրուտութեան տեխնիկան և գործիքները—մանրամասնօրէն թուել ամեն մէկը առանձին մասերի անուններով: (Լուսանկար) բրուտի հնոցը—սրա լուսանկարը, ուրուագիծը, մեծութիւնը և ամաններ թրծելու ձևը (այդ գործողութեան ժամանակ փչացած ամանների 0/10-ը ցոյց տալ): Աղիւս. սրա պատրաստութիւնը, ձևն ու գործիքները: Ջնարակի (փայլաներկի) պատրաստութիւնը, դրա ղեցեպտը, (գրել ճշտութեամբ՝ նշանակելով՝ թէ նիւթերը ձրտեղից են ձեռք բերում): Ապակեփայլ աղիւս (изразцы): Ամանեղէնների պատրաստութիւնը,

ամանների նմուշները, անուշները, չափը, նշանակութիւնը (ինչի՞ համար է գործածուում): Ամանի նախշը (ինչի՞ և ինչպէ՞ս): Նախշերի նմուշներ հաւաքելը Շուկայ և այլ տեղեր տանելու համար ինչպէս են դարսում ամանները: Կաւեայ մանր կերտուածներ—խաղալիքներ և այլն: Ներկի համար կաւի ինչ տեսակներն են գործածուում:

7. Բրդի եւ քելաւաս (волокнистый) նիւթերի մեկուկը (բրդի մշակութիւնը: Պուղելը, սանրելը, գղելը (գործիքները: Թուել) թակելը, լըմելը, քէչա լմելը և այլն: Թաւամաղ քէչա: Բէչայ թափելու գործիքները: Բ) Վուշի և կանեփի մշակութիւնը: ինչպէս են հաւաքում, ցամաքեցնում, թրջում, եփում (մրտեղ և ինչ յարմարութիւններով), թակելը և մաքրելը (գործիքները): Մանելը և գործելը: Գործիքներ ու յարմարութիւններ.— Թեշիկ, ճախարակ, դաղգահ: Դաղգահի մօղելը, նրա լուսանկարը՝ աշխատանքի ժամանակ: Դաղգահի մասերը՝ անուշներով: Յոյց տալ՝ Թէ դաղգահը ինչ նիւթից է պատրաստած, նոյնը և նրա մասերի վերաբերմամբ: Բ) Արդեօք նոյն կարիքների համար չէ՞ն գործածուում ուրիշ նիւթեր, ինչպէս օր. դփտիկ, բանջարեղէններ: Բոյսեր և այլն:

Մանօքուրիւն: Ցանկալի է՝ հաւաքել գործուածքների նմուշները և նշանակել տեղական անուշները:

8. Տեղափոխութեան ձեւերն ու յարմարութիւնները: Լծու և բխւի կենդանիներ: Թամք և սէմար (вьюк): Մեղ հետաքրքրող տեղում արդեօք քարշակներ (волокуши) չկան: Ցանկալի է նմուշներն ունենալ՝ իսկականը: Սահնակ, սայլ, նրանց տիպերը, (ձիու, եղի և այլն): Ձիու սարք, Թամք, աղեղ, (նախշած, ներկած), լուծ և այլն: Լծու պիտոյքներ: Սայլ, սահնակ և այլն շինելը: Ինչի՞ համար է գործածուում դրանցից ամեն մէկը: Ջարդարանքները (ներկ. փորագրութիւն): Արդեօք ամառը քարշակներ կամ սահնակներ չէ՞ն գործածուում (ինչպէս օրինակ՝ մեռելի թաղման ժամանակ): Որսորդական սահնակներ: Ծան միջոցով փոխադրութիւններ անելը:

Փայտ և այլ մթերքներ փոխադրելու համար սօփերի շինելը: Նաւակներ, մակոյկներ և նրանց շինութիւնը: Մօզէլներ: Նոյն նպատակի համար ծառեր փորելը: Դրանց գործածութեան ձեւ, թիակներ, ղեկ և առանձին մասերի անուշները:

Նաւերի տիպեր.— դրանց անուշները և գործածութիւնը: Բարկանաւ (барка), բոնակիր նաւ, առագաստանաւ, նաւակ և այլն: Այդ բոլորը պէտք է մօզելներով ներկայացւի: Նաւաշինութեան պիտոյքները:

Հոգատարութիւն՝ հաղորդակցութեան ճանապարհներէ մասին: Կամուրջներ, հողաթումբեր, մանաւանդ անտառներում), ցախից շինած ուղի կամ կամուրջ, ճանապարհներ՝ զանազան տեսակ—այդ բոլորի շինութեան ձեւը և կազմող մասերի ժողովրդական անունները: Կանաւներ (խանդակ) փորելը, ինչպէս են փորում տեղացիները, ինչպէս են դուրս հանում հողը, սայլակներ և այլն: Գետերից անցնելու յարմարութիւններ:

Մանօրութիւն, խիստ ցանկալի է որ ցոյց տրուի թէ այս կամ այն արտադրութիւնը կամ մթերքը ինչ ուսուցանելու է տարածւած:

IV.

ՈՒՏԵՆԼԻՔ ԵՒ ԽՄԵԼԻՔ

Ձնայելով այն հանգամանքին՝ որ կերակուրը ազգազրական տեսակէտից մեծ հետաքրքրութեան արժանի է՝ այնուամենայնիւ՝ նա, որպէս ամեն օր գործածւող նիւթ, միայն հազադիւտ ղէպքերում կարող է թանգարանում պահել: Ուստի՝ անհրաժեշտ է ուտելիքը նկարագրել ամենայն մանրամասնութեամբ, նկարագրել նրա պատրաստութիւնը տեղում, հաւաքել բոլոր այն պիտոյքները՝ որ հարկաւոր են դրա համար:

1. Հում ուտելիք: Առանց եփելու ինչ վայրի բոյսեր են գործածւում իբրև ուտելիք: Օրինակ՝ թրթնջուկը: Հաւաքել այդ բոյսերը կանաչ-կանաչ և չորացնել թղթի թերթերի մէջ: Ուտուելիք արմատները կոխել եփ ջրի մէջ և թելով կախել:

Տկառօղութիւն: Բոյսերի ցողուններն ու տերեւները նոյնպէս և արմատները մեծ մասամբ երեխաներն են ուտում, հէնց նրանցից էլ պէտք է տեղեկութիւններ ու հում ուտելիքների նմուշներ հաւաքել:

Միւրգ, ընկոյզ, վայրի պտուղներ: Նշանակել թէ դրանցից որը և ինչ համեմունքների հետ է գործածւում առանց եփելու և որոնք են չորացւում ապագայ գործածութեան համար:

Ինչ խոտեր, ծաղիկներ ու տերեւներ են գործածւում թէյի փոխարէն: (Նշանակել թէ որոնք են գործածւում իբրև դեղ և որոնք են պատրաստւում իբրև պաղ ու տաք խմիչք):

Թուել՝ թէ ինչ բանջարեղէններ ու պտուղներ գործածւում են հում-հում:

Հում մսի և ձկան գործածութիւն: Իբրև կերակուր և համեմ գործածւող չորացրած ձուկ: Ձկան որ մասերն են գործած-

ւում առանց եփելու (խաւիար, ձկնկիթ)։ Հում մօլիւսկների գործածութիւնը կերակրի մէջ։

Ինչպէս են նայում այն մարդոց, որոնք հում միս են գործածում։ Հում և սառեցրած ճարպի գործածութիւնը։ Արդեօք արիւնը կերակրի մէջ չեն գործածում։

2. Առանց կրակի պատրաստած կերակուր։ Զորացրած պտուղներ, սունկեր, մրգեր և բանջարեղէններ։ Հաւաքել նմուշներ, նշանակել անունները և չորացնելու գործիքներն ու յարմարութիւնները՝ նոյնպէս իրանց տեղական անուններով։ Թէև վառարանով չորացնելու համար վառարանը պէտք է տաքացնեն, այսինքն՝ դիմեն արհեստական կրակի՝ օգնութեանը, սակայն աչքի առաջ ունենալով՝ որ այդ միջոցը արևով չորացնելու կատարելապէս գործածած ձևն է՝ այն ևս պէտք է մտցնել վերջին կատէգորիայի մէջ։ Պէտք է յիշել իհարկէ՝ որ չորացնում են նաև վառարանով։ Միս և ձուկ չորացնելու։ Ձկնի ձր տեսակներն են չորացնում։

Ձկան և մսի ապխտելը (ծխով չորացնելը) թէև կրակի օգնութեամբ է կատարւում, բայց աւելի լաւ է մտցնել նոյնպէս այս կատէգորիայի մէջ։

Ինչ դէպքերում է գործածւում չորացրած կամ ապխտած միսը (ճամբրի պաշար)։

Աղ դնելը (աղելը), նրա ձևերը։ Բացի աղից այդ դէպքերում ուրիշ ինչ նիւթեր են գործածւում։ Աղը պակասած ժամանակ՝ նրա փոխարէն ինչ են գործածում (մոխիր, ածուխ)։ Հաւաքել աղը փոխարինող նիւթերից նմուշներ։

3. Կրակի օգնութեամբ պատրաստող կերակուր։ Հացը եւ ցրա պատրաստութիւնը։ Այս բաժինն այնքան մեծ է որ հնարաւորութիւն չկայ սպառելու մի ծրագրով՝ որը զուտ գործնական նպատակ ունի—Ժանգարանի համար նիւթեր հաւաքողին գործնական ցուցմունքներ տալ։ Այստեղ մենք միայն ընդհանուր ցուցմունքներ ենք տալիս։

Անեկ հացի (չը թթուցրած) զանազան տեսակները—գաթա, բաղարջ, պէկսիմատ և այլն։ Պատրաստելու ձևը, նմուշներ։ Գոլորշիով եփած կամ խաշած հացի տեսակները։ (Կարելի է հաւաքել զանազան տեսակ հացի նմուշներ, բայց պէտք է լաք քսել որ չը փչանան)։ խմորեղէններ, նրանց տեսակները, անունը և պատրաստելու եղանակը։

Ալիւրի այն տեսակների նմուշները, որոնցից հաց են պատրաստում։ Մաքուր ալիւրի հաց և խառնուրդով (թեփի և այլն) պատրաստած հաց։

(Այն տեղերում ուր չկայ ցորենի ալիւր, գործածում են

գարի, վարսակ... Այդպիսի տեղերում յաճախ պահպանում է հաց թխելու և հացի ձևերի ամենահին եղանակը):

Չկան արդեօք զանազան հացահատիկներից պատրաստած հացեր: Ի՞նչ դէպքերում և ինչի՞ համար են գործածում զրանք: Երակուր՝ զանազան ալիւրանման ու ալիւրաշատ նիւթներից: Կորկոս, փոխինձ և այլն: Դրանցից ռրից են ալիւր աղում և ռըր գործածում են հատիկներով: Արդեօք չկան երկանքներ:

Բանջարեղէններ, որ եփում են և գործածում իբրև տոք-կերակուր: Բանջարեղէններ, որ գործածում են իբրև համեմունք կերակրի մէջ:

Միսը և նրա պատրաստութիւնը:

Հաց թխելու պիտոյքները.— կաղապարներ, տերէններ և այլն: Նկարագրել հաց թխելու ամբողջ գործողութիւնը, թոնիր և փոփի ձևը, շէնքը և գործածութիւնը:

4. Տօնային ուսելիք: Միսը պատմութիւն և պատկեր: Մեղ հետաքրքրող տեղում ի՞նչ տեսակ միս է գործածում ամենքից շատ և յաճախ: Մսի ժր տեղերն են համարում ամենից լաւը և համեղը: Ուտելու համար մսի ի՞նչ տեղերն են արգելւած համարում: Միսը տապակելու և կարմրցնելու եղանակները:

Ձկնեղէն կերակուրներ: Պաշած և տապակած ձուկ:

Ձուի գործածութիւնը: Ձուաձեղով հիւրասիրելն արդեօք մի առանձին նշանակութիւն չունի (նորափեսայ և այլն): Ապրուստի մէջ զանազան ժամանակ ձու գործածելը: Նախած և ներկած ձուերը գեղարուեստական տեսակէտից մեծ նշանակութիւն ունին. ձու ներկելու՝ ժողովրդի մէջ ընդունւած եղանակները կարեւոր են ներկարարութեան ուսումնասիրութեան համար, ուստի զատկական ձուերի բոլոր տեսակների ժողովածուն պէտք է ըստ կարելոյն լրիւ կազմել:

5. Ուսելիքը հանդէսների եւ արարողութիւնների ժամանակ: Այլաբանական միտք ունեցող ուսելիք: Արարողական պէտք է համարել այն կերակուրը, որը յայտնի անցքի, արարողութեան կամ տօնի անհրաժեշտ պայմաններից է համարւում— ինչպէս օրինակ՝ հարսանիքի զաթա, կարմրցրած հաւ, երկուշարթւայ (պսակից յետոյ) խաշ և այլն:

Արդեօք յատուկ կերակուրներ չկան միացած—ընկերական աշխատանքի ժամանակ, ինչպէս օրինակ՝ գութնոցին, մօտկամութեան մէջ, շալ լըմիլիս, «հող ձգելիս», «մէջիի» ժամանակ, և այլն:

Բացի ուտելու համար պատրաստած կերակրներից կան նաև այնպիսի ուտելեղէններ, որոնք համարեա չեն գործածւում որպէս

ուտելիք: այլ պատրաստում են որոշ նպատակներով, ինչպէս օրինակ՝ զոհ բերելու կամ թոշուներին տալու, ինչպէս՝ հաց թրխելիս՝ առաջին լաւաշը՝ թոշուներին և այլն: Մի քանի տեղերում որոշ ուտելիքներ տալիս են աղքատներին: Յատկապէս երեսաների համար պատրաստած ուտելիքներ:

Ջատկական ձուն մասամբ այդ երկու տեսակին էլ պատկանում է: Օրհնած ձուն մի քանի տեղերում հրդեհից ու դժբախտութիւններից պահող միջոց է համարւում:

Յորեն գործածող տեղերում հաց թխելու զանազան եղանակները: Արդեօք բացի հաւի ձուից գործածւում են նաև ուրիշ թոշուների ձուեր: Գործածւում են արդեօք վայրենի թոշուների ձուերը:

Արարողական նշանակութիւն ունեցող կարկանդակներ. ներանց նախշերը, ձևը, ինչպէս «տարի» և այլն:

Կարճեղէն կերակուր: Թարմ, կաթի, թթուեցրած կաթի և մածնի գործածութիւնը: Իւղի և պանրի պատրաստութեան զանազան եղանակները: Կաթնատնտեսութեան պետոյքները: Ուշադրութիւն դարձնել կաթնեղէն ուտելիքների վրայ՝ որ պատրաստւում են իրրև ապաղայի համար պաշար:

Տնային փայտեղէններ: Դաշտերի զէններ, ընկոյզ, քաղցր խմորեղէններ և դրանց ձևերը:

Կերակրի դաստառութիւնը բոս սեզօնի: Կերակուր՝ պասալ և ուտիսւայ, ամաուայ, աշնան, դարնան և ձմեռայ:

Միջանի միներներ կազմել պասալ և ուտիսւայ, տօնային և սովորական, հարուստ և աղքատ ընտանիքների: «Հաց զները» և նրա նկարագրութիւնը. ամանեղէնը, (ուշադրութիւն դարձնել աղամանի վրայ, գրել բոլոր այն աւանդութիւնները, սովորութիւններն ու նախապաշարմունքները, որ կապւած են աղի հետ): Արարողութիւններն ու սովորութիւնները դիտել առանձին հանդիսաւոր դէպքերի ժամանակ, որովհետև սովորական կեանքում, առօրեայ ապրուստի մէջ, երբ օտար մարդիկ չկան, շատ անգամ անհնար է լինում նկատել զանազան սովորութիւններ ու աւանդական նախապաշարմունքներ, որոնք ամենօրեայ «հաց ուտելու» ժամանակ չեն պահւում:

Կերակրի սուրբօգտներ: Ուտելիքի պակասութեան ժամանակ ժողովուրդը նրա փոխարէն պործածում է այլ նիւթեր, կամ հացը պատրաստում է զանազան խառնուրդներով: Այդ փոխանիւթերը պէտք է հաւաքել նմուշներով, որովհետև նրանք ցոյց են տալիս ժողովրդի հին կենցաղը, նաև նրա՝ կեանքի զանազան պայմաններին յարմարելու եղանակն ու միջոցները:

7. Արգելւած ուսելիդեցներ: Ի՞նչ կենդանիների միսը համարւում է անմաքուր և չի գործածւում իբրև ուտելիք: Կան և այս ու այն ուտելիքի արգելման ուրիշ պատճառներ.— օր. Ռուսաստանում որոշ տեսակի ձկներ չեն ուտում, որովհետև նրանց գլխի կռիկները խաչի ձև ունին: Գնդաձև իրեր ուտելու արգելքը (գետնախնձոր, խնձոր, բողկ, ձմերուկ և այլն) Յովհաննէս Մկրտչի ծննդեան օրը: Միքանի տեղերում անմաքար է համարւում աքաղաղի, նապաստակի միսը:

Խմիչքներ: Արաղի, կվասի, գարեջրի, շերբաթի պատրաստութեան եղանակը:

Թէյի և նրան փոխարինող նիւթերի գործածութիւնը:

Շէրբաթի տեսակները, նշանակել թէ նրացից մին է գործածւում ամեն օր և որը՝ հիւանդութիւնների ժամանակ իբրև դեղ:

Այդ խմիչքների համար թիւ ամաններ են գործածւում և թիւ յարմարութիւններ են հնարած. նոյնպէս և խմիչքների պատրաստութեան համար անհրաժեշտ նիւթերը—եթէ կարելի է նմուշներով:

Մանրութիւն: Ուշադրութիւն դարձնել ծխախոտագործութեան վրայ, նշանակել՝ թէ ծխախոտն ի՞նչպէս են գործածում—ծխում են, ծամում են... ծխամորջների նմուշներ հաւաքել: Ծխախոտին փոխարինող նիւթեր: Ի՞նչ նիւթեր են գործածւում իբրև ծամոններ:

Պտուղներ և սունկ հաւաքելը, ամաններ ու գործիքներ—որոնք գործածում են այդ ժամանակ:

Ձկնօրսութիւն: Նշանակել՝ թէ արդեօք ձուկ որսալու թիւ միջոցներ կան: Արդեօք ձեռքով կամ կողովով չի՞նք բռնում քարերի տակից, բներից: Թուել ձկնորսութեան ամենահասարակ յարմարութիւնները:

Ձկնորսութիւնը՝ կարթով: Ինքնագործ կարթերի, «չանկալ» ներիւ զանազան տեսակները: Կարթերի այս ու այն ձևը թիւ տեսակ ձկներ որսալու համար է գործածւում: Ձկնորսութեան բարդ գործիքները: Ի՞նչպէս են ձկներին զրաւում՝ մի որոշ տեղ հաւաքելու համար,—չորացրած հաց և այլն: Նոյն նպատակի համար ճիճուների, ճանճերի, մանր ձկների գործածութիւնը: Ձուկ զարնելը սաթըրով, թրով, փայտով, նետով: Ձկնորսութիւնը գիշերը—առհետափկան լուսով նաւակից կամ ափից: Ձուկ որսալը սառցի տակից.— զանազան գործիքներ ու յարմարութիւններ՝ այդ նպատակով շինւած:

Ձկան թունաւորելը: Ի՞նչ տեսակ թոյներ են գործածւում այդ նպատակով:

Ձկնորսական մակոյկներ. եղեգնից և ուռերից շինած մակոյկներ: Որոշ տեղում ամրացնելու ցանցեր: Քարփ:»

Ձուկ տեղափոխելու յարմարութիւններ,—ցանցեր, կողովներ ևայլն:

Երեք սափէնից աւելի երկարութիւն չունեցող ցանցերի նըմուշը կարելի է իսկականով վերցնել, իսկ կարճը՝ աւելի լաւ է մօղելով, ըստ որում՝ հարկաւոր է մանր մասերը իսկականով հաւաքել: Պէտք է հաւաքել նաև այն գործիքները, մաքուր ևայլն որոնցով գործում են ուռկաններ, ցանցեր:

Որսած ձուկը հաւաքելու, պահելու յարմարութիւններ: Ձրկնորսների բնակարանները.—խուղ, խիւլակ ևայլն.—բնակարանի բոլոր ձևից վերցնել մօտելը իսկականի $1/10$ մեծութեամբ և հանել լուսանկարը: Մակոյկներ, «տօփ»-եր—որոնք գործածւում են ձուկ որսալիս. թէ՛ ուռկանով, թէ՛ կարթով.—վերցնել դրանց մօղելը ($1/10$ -ի մեծութեամբ) և լուսանկարը:

Ձկնորսութեան վերաբերեալ ճիշդեցնելու մասին քնդհանուր նկատողութիւններ: Ձկնորսութեան համար նիւթեր հաւաքելիս ամեն մի պիտոյքի վերաբերմամբ պէտք է ցոյց տալ թէ՛ տեսակի ձուկ որսալու համար է գործածւում, արդեօք լճից, գետից թէ՛ ծովից ձուկ որսալու համար է յարմարացրած, երբ է գործածւում՝ ամառը, զարնանը, թէ՛ աշնանը: Այն դէպքում, երբ ձրկնորսութեան համար յատուկ արշաւանքներ են անում, պէտք է մանրամասնութեամբ նկարագրել բոլոր պայմանները, գործի կազմակերպութեան բոլոր մօմենտները, գործածւող անհրաժեշտ պիտոյքները, որը կարելի է՝ իսկական նմուշով, որը նմուշով անկարելի է՝ մօղելով: Ձկնորսութեան հետ մօտիկ կապ ունի ծովային կենդանիների որսը: Այն տեղերում ուր վերջինս գոյութիւն ունի՝ առաջնորդել արդէն մեր արած ցուցմունքներով թէ ձկնորսութեան վերաբերմամբ և թէ այլ բաժնի ցուցմունքներով ուր խօսել ենք որսորդութեան մասին:

Հասարակ ձկնորսները մի ամբողջ շարք հաւատալիքներ, նախապաշարմունքներ, արարողութիւններ, աղօթքներ ու գուշակութեան զանազան միջոցներ գիտեն՝ որոնցով կարելի է ձկներին գրաւել, փոթորիկը զսպել կամ սաստկացնել ևայլն, ևայլն: Այդ բոլոր տեղեկութիւնները պէտք է հաւաքել և գրի անցնել:

Ձկնորսութեան համար կան առանձնապէս յարմարաւոր տեղեր այս ու այն գիւղի, լեռան, բլրակի մօտ, գետի այս ու այն մասում: Յանկալի է ունենալ այդպիսի տեղերի լուսանկարը և բացատրութիւն՝ թէ ինչո՞ւ այդ տեղերը համարւում են առանձնապէս յարմար: Պէտք է տեղեկանալ թէ ձր ձուկն է գլխաւորա-

պէս գործածուած և չկան արդեօք ձկան այնպիսի տեսակներ՝ որոնք ամենեւին չեն գործածուած և եթէ կան՝ նշանակել զրա պատճառը:

Արտորգութիւն: Որսորդութիւնը նշանակութիւն ունի զխաւորապէս այն տեղերում՝ ուր դրանով զրադուած է բնակչութեան մեծամասնութիւնը, ուր որսորդութիւնը ոչ թէ ժամանցի զուարճութեան միջոց է, այլ ապրուստի միջոց:

Ամենից առաջ պէտք է ուշադրութիւն դարձնել որսորդութեան այն ձևերի վրայ, որոնց ժամանակ հրազէն չեն գործածուած: Թռչունների որսն՝ առանց թակարդների ու ցանցերի: (Այս նիւթի մասին կարեւոր տեղեկութիւններ կարող են տալ երիտանները): Բազերի և սագերի որսը, փետրափոխութեան ժամանակ: Կաքաւների և այլ թռչունների որսն օդակներով: Որսորդութեան այդ տեսակի պիտոյքները, թռչուններ գրաւելու միջոցները—փողեր (շէի) և այլն:

Գազանների որսը թակարդներով, օդակներով, ցանցերով և այլն: Որսորդութիւնը շան օգնութեամբ: Որսորդութիւնը սովորեցրած թռչունի օգնութեամբ (բազէ և այլն): Մնամքով հաւաքել այդպիսի թռչուններ վարժեցնելու և նրանցով որսորդութիւն անելու պիտոյքները:

Որսորդութիւն՝ հրացանով ու շնով սկիւռի, արջի... վրայ: Իսկական որսորդի պիտոյքները: Գազաններ որսալու թակարդների մօզէլներ:

Հրազէններից պէտք է այնպիսիք ուշադրութեան առարկայ դարձնել, որոնք տարածւած են մեզ հետաքրքրող տեղում և ընդհանուր գործածութեան մէջ են, (իհարկէ՝ ոչ գործարանային հրազէնների): Աւելի լաւ է հաւաքել հին տեսակները, իսկ նորերից՝ տեղացիների ձեռքով շինածները:

Որսորդական խրճիթներ, խուղեր հեռաւոր որսատեղերում:

Ծովային կենդանիների որսը: Այդ ժամանակ գործածւող զէնքերն ու յարմարութիւնները: (Պարապմունքով որսորդի պիտոյքները—հագուստ, զէնք և այլն):

Որսորդութիւն—ամբողջ հասարակութեամբ, ընկերութիւններով, խմբերով: Ի՞նչ տ.սակ կենդանիներ է արգելուած սպանել (աղաւնի, կարապ, արագիլ):

Մեղուաբուծութիւն: Փեթկնոցի, կուռի... շէնքը (հաւաքել մօզէլները): Մեղուանոցների, փեթկնոցների տեսակները: Տեղացիներն արդեօք վայրի մեղուներ որսալու սովորութիւն ունե՞ն: Դրա համար գործածւող յարմարութիւնները: Փեթկների ինամքը: Մեղուաբուծութեան մէջ գործածւող յարմարութիւններն ու գործիքները:

Անասնապահութիւն: Միզ հետաքրքրող տեղում եղած կենդանիների տեսակները: Կենդանիների ուտելիքն ամառն ու ձմեռը:

Ձի.—Ձի վարժեցնելը, կրտելը (միւս կենդանիների կրտելը. թնշ ժամանակ են կրտում և թնշպէս): Դեղեր հիւանդութիւնների դէմ. չար աչքից ազատ պահելու հուլունքներ, համայրիներ, լըծան և նստելու պարագաներ:

Կով.—Խնչպէս են պահում կովին ամառն ու ձմեռը: Նրան «հոգալու» պարագաները: Եղան լուծ: Ժամանակաւոր կամ մշտական բնակատեղի (խուղ, խուլակ) վար անողի, հերկողների համար (վրան կայն): Դեղեր ու միջոցներ հիւանդութիւնների դէմ: Կաշին բերթելը և պահելու միջոցները (աղելը կայն): Եղջիւրների գործածութիւնն այս կամ այն նպատակով (աղածան, ջուր խըմելու հովիւների համար սանր կայն):

Ոչխար.—Ճալ նոյն տեղեկութիւնները ինչ որ կովի մասին: Աւանձին ուշադրութիւն դարձնել բրդի վրայ: Խնչ գործիքներով են խուզում, երբ են խուզում, թնշպէս են լուանում և չորացնում բուրդը, թնշպէս են գզում, մանում, գործում: Գուլպա, ոտնաման, բէշա կայն: Բուրդն թնշպէս են ներկում. ներկելու նիւթերը: Այդ աշխատանքների ժամանակ գործածւող բոլոր գործիքները:

Ընտանի կենդանիների միւս տեսակները—կղջերուն, ուղտը, գոմէշը, էշը—ամեն տեղերում չկան և նրանց վերաբերմամբ էլ պէտք է հաւաքել բոլոր վերոյիշեալ տեղեկութիւնները: Պէտք է հաւաքել նաև նմուշներ ու գործիքներ:

Հովիւներ.—Ձանազան տեսակի անասունների հովիւներ.—հովիւների հագուստը, դակնակը, մտրակը, շըւին, փողը կայն:

Ընդհանուր նկատողութիւններ անասնապահութեան մասին: Այն տեղերում ուր անասնապահութիւնը շատ է զարգացած՝ տեղական բնակիչների մէջ գոյութիւն ունեն թափառական կեանքի մնացորդները—անասուններ «ըջելը» հեռաւոր արօտատեղիները, յատուկ բնակատեղիներ շինելը, հաւաքել դրանց մօզէլներն ու նմուշները:

Խոտաբե.—Պէտք է տարբերել խոտհարքի զանազան տեսակները զանազան տեղերում—«չայրիւններում», անտառում, ճահիճներում, «սարերում»:

Խնչով են քաղում խոտը—դրա համար գոյութիւն ունեցող զանազան գործիքներ: Արդեօք մանգաղով խոտ չմն հնձում: Գերանդին ծեծելու, սրելու պարագաները (խարտոց, աւաղ կայն): Նշանակել թէ այդ տեղում թնշ գերանդիներ են ընդունւած և թնշ տեսակներն են գերադասում: Եթէ կան քաղելու ուրիշ գործիք-

ներ—շանակել, նկարագրել այդ գործիքը և լուսանկարել՝ թէ ինչպէս են աշխատում այդ գործիքով:

Փոցիս, հղան—խոտը վերցնելու, հաւաքելու, փոցխելու: Եղէններ ու դէզեր «բանալու» յատուկ եղանակներ. (եթէ սրանք շատ մեծ են՝ վերցնել միայն գլուխը և կոթից մի մասը—մօտաւորապէս մէկ ֆուտ երկարութեամբ—այնպէս որ յետոյ կարելի լինի նոր կոթ ամրացնել):

Լուսանկարել խոտի դէզեր, բլուրներ, եղէններ, թափուկներ: Ինչ միջոցների են դիմում խոտը թրջելուց, փթելուց ապահովելու համար (ծածք կայլն):

Նկարել խոտհարքի գործողութիւնը (քաղը, փոցխը, բլուր, եղէն անելը, սայլ «բառնալը»):

Ինչպիսիք են կրում խոտը—շամբերից, աւազուտներից. եթէ քաշան են անում՝ նկարագրել այդ գործողութիւնը և անհրաժեշտ պիտոյքները:

Խոտատեղիների բաժանումը,—Ինչպէս են բաժանում. նկարագրել այդ գործողութիւնը: Եթէ «չօփ» են դցում, չօփերի նըմուշները հաւաքել:

Նկատողութիւն.—Առհասարակ պէտք է հաւաքել գիւղական տ' տեսութեան մէջ գործածուող բոլոր չափերի ըստ կարելւոյն լիակատար կօլէկցիան—ծանրութեան, հատիկների, հեղուկների չափը, տարածութեան կայլն: Յիշել թէ ինչ միջոցներ կան չափերը միտքը պահելու. հաշիւներ պահելու—գիծ, «բեառթ», կայլն:

Խոտ ցանելը: Թէ և այս րարցը հողի մշակութեան հետ է կապուած, բայց քանի որ նա անմիջական կապ ունի խոտհարքի հետ, այս բաժնում միջանի տեղեկութիւններ պէտք է տալ: Անասուններ կերակրելու համար խոտի ինչ տեսակներ են ցանում: Նրանց հաւաքելու ձևերը (գերանդով են քաղում թէ մանգաղով): Ինչպէս են չորացնում. դէզն ինչպէս են կտրում: Գործիքներ ու յարմարութիւններ:

Երկրագործութիւն: Հողի մշակութիւնը ձեռքով: Բահ, «ղազմա», փոցիս, թի—հողը փորելու ու փափկացնելու համար: Այդ գործիքների տեսակները, նրանց անունը, առանձին մասերն իրանց անուններով: Տնկած բոյսերի մշակութիւնն այդ գործիքներով և մշակութեան եղանակը: (Թուել այն բոյսերը՝ որոնք մշակում են ձեռքով):

Ջամբիւղներ, հիւսած գոգնոցներ կայլն, որոնք գործածում են ցանքի ժամանակ: Տնկարանները ջրելու, բոյսերի «բուկը տալու», տնկելու գործիքները:

Բանջարեղէնների հաւաքելու և պահելու գործիքներ ու

յարմարութիւններ: (Կարտոֆիլի, գազարի հորեր, մոխրի մէջ թաղել և այլն):

Գործիքներից գերազառութիւն տալ նրանց՝ որոնք շինւած են տեղացիների ձեռքով, փայտից են և արդէն գործածւած են. նորերին ու երկաթից շինուածներին—երկրորդական տեղ տալ:

Եթէ կան առանձին մասնագիտական պարապմունքներ—ինչպէս օրինակ՝ ծխախոտի, մանանեխի, արևածաղկի մշակութիւն—տեղեկութիւններ տալ դրանց մասին և նշանակել թէ ի՞նչպէս են սկսուել այդ պարապմունքները և ի՞նչպիսի գործիքներ են գործածուում:

Պլան հանել բանջարանոցներից և առհասարակ այն հողաբաժիններից՝ որոնք ձեռքով են մշակուում: Յանկալի է ունենալ լուսանկարներ այն տեսարանների՝ թէ ինչպէս են աշխատում ու բանեցնում զանազան գործիքներ հողը ձեռքով մշակելիս:

Հողի մեակութիւնն անասունների օգնութեամբ: Գլխաւորապէս և յաւիտապէս սեղ հետաքրքրող տեղում պատրաստած արօնների, կռնանների, գութանների, տափանների մօզելների:

Մանրամասն ցուցակագրել այդ գործիքների զանազան մասերի անունները:

Յոյց տալ թէ ի՞նչ տեսակ հողի և հացի ի՞նչ տեսակի համար ի՞նչ գործիք են բանեցնում և քանի անասունների օգնութեամբ: Գործիքները պէտք է լծելու բոլոր պարագաներով յիշել:

Եթէ տեղում երկրագործական գործիքների երկաթէ մասերը չեն շինում—հապա ձրտեղից են ստանում—նշանակել այդ:

Ե՞րբ է սկսուում ցանը: Յանկալի է վար անողի լուսանկարն ունենալ՝ աշխատելիս:

Յանքն ու նրա պիտոյքները:

Հացը հաւաքելու գործիքներ.—գերանդի, մանգաղ, փոցի, կամ, թի և հիւսելի թեղն էրնելու համար:

Ուրծ: Ուրծ կապելն ու դէզ շարելը: Եղէն: Օրան չորացնելու յարմարութիւններ—կալ կայլն:

Յանկալի է ունենալ մօզէլներ բոլոր գործիքներից:

Մշակող հացահատիկների ու բոլոր բոյսերի տեսակները թւելիս՝ պէտք է ցոյց տալ թէ այս ու այն տեսակի մշակութիւնն ի՞նչ առանձնայատկութիւններ ունի: Նշանակել թէ ձրոնք են մանգաղով հնձուում:

Հողի հետ կապւած սովորութիւնները, նախապաշարմունքները, հաւատալիքները:

Ի՞նչ միջոցներով են պաշտպանում արտերը, դաշտերը,

պարտէզները, բանջարանոցները երկրագործութեան թշնամիներէից — միջատներից, թռչուններից, կենդանիներից, Նմուշներ:

Բոյսեր տնկելու ու ցանկելու ժամանակ գործ դրւող նախապատրաստական ու նախագգուշական միջոցներ: Միջոցներ՝ փառակար միջատների դէմ, Բնչ միջոցներ են գործ դրւում այգիներն ու բանջարանոցները ցրտից պահելու:

Հողաշափութեան համար Բնչ միջոցներ, յարմարութիւններ ու գործիքներ կան:

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿԵՆՑԱՂԸ

1. Մնումը: Նշանակել թէ Բնչ միջոցներ կան կնոջն յղութիւնից ազատ պահելու և սաղմը մեղցնելու համար. — նաև՝ թէ Բնչ միջոցներ են գործ դրւում ծնունդն շտապեցնելու և թեթեւացնելու համար: Դաշտանը և այն բոլորը՝ ինչ որ վերաբերում է նրան: Հաւաքել այն իրերը՝ որոնք գործ են դրւում ծնունդի ժամանակ կատարւող արարողութիւնների մէջ (օրինակ՝ չար աչքից հեռու պահելու, չար ոգիներին հալածելու և այլն): Ինչ ընծաներ է ստանում տղոցկանը: Օրօրոցը և նրա պիտոյքները: Եկեղեցական բնոյթ ունեցող իրերը, որոնք վործածւում են անուն դնելիս և մկրտելիս:

Մկրտութիւն: Ցոյց տալ կնքահօր և կնքակնոջ նշանակութիւնն ու դերը — զանազան կրօնների ու դաւանանքների ժողովրդների մէջ ծնունդի և մկրտութեան ժամանակ: Նոյնը նշանակել նաև «գահեկի» վերաբերմամբ: Կնքահօր ու կնքակնոջ տուած նուէրների նմուշները հաւաքել:

Եթէ կան յատուկ անուններ ու մականուններ յղի կանանց կամ մինչև ամուսնութիւնը տղածարդու հետ յարաբերութեան մէջ մտած աղջիկների համար՝ նշանակել: Եթէ այդպիսի կանայք ու աղջիկներն ունին առանձին հագուստներ որոշ ձևով, որ ուրիշները չեն հագնում՝ նշանակել անունները և հաւաքել նմուշներ: Ապօրինի դաւակների ծննդեան ժամանակ կատարւող արարողութիւնների առանձնապատուկ կողմերը նշանակել: Նոյնը նշանակել նաև ապօրինի ծնուածի մկրտութեան ժամանակ և զբի առնել կնքահօր պարտականութիւնները երեխայի վերաբերմամբ:

2. Նրեխաների կրթութիւնը: Տալ մանկական կեանքի և նրա պայմանների լիակատար պատկերը: Օրօրոցը խրճիթում և դաշտում: Պտուկ, «համգիւկ», երեխի կերակուրը: Մանուկների պարագմունքն ու ձեռագործը:

3. Նրիսասարգների ու աղջիկների կեանքի միջեւ նշանակել ու պատկերել: Յիշել, եթէ կան, երիտասարդների ու աղջիկների ա-

ռանձին ընկերութիւններ. («Էդրայր դառնալ», «Զբոյր դառնալ»), Խմբակցութիւններ՝ զուարճութեան համար («մէտնի ասել» կայլն), «Ուղող տղի» ու «աղջկայ» համար («Փալ» բանալը, («համայրիներ», հլունքներ, գունաւոր թիւեր, արմտներ, պտուղներ կայլն), Յիշել եթէ կան աղջիկների համար յատուկ տօներ (առանձին հագուստներով), տալ նմուշներ ու պատկերներ դրանց վերաբերեալ:

Հարսնացուի ու փեսացուի փոխադարձ նուէրների նմուշներու Հարսնեղբների ու առհասարակ հարսանիքին որեւէ կերպով մասնակցողների ստացած նուէրների նմուշը: Օժիտը: Միջոցներ (նախապաշարմունք, հմայքներ) երիտասարդներին ու աղջիկներին փշանալուց հետո պահելու համար: Հարսանեկան տրարողութեա՝ մէջ գործածուող ոչ—եկեղեցական իրերը: Յուցմունքներ տալ այն աղջիկների մասին՝ որոնք «տանն են մնում»: Նկարագրել և պատկերներ ու նմուշներ տալ երկրորդ, երրորդ անգամ ամուսնացողների վերաբերմամբ (հագուստը, սովորոյթները, կայլն):

Լիակատար տեղեկութիւններ տալ հարսնախօսութեան, նշանդէքի, նշանօրհնէքի, և հարսանիքի վերաբերմամբ: Օժիտ տրուող իրերի ցուցակը: «Թագւորքիներին», ծաղկոց՝ երէի, հարսեղբօր հագուստը, զարդարանքը, զէնքը (խէնչար, թուր կայլն):

Երիտասարդ ամուսիններին փշանալուց հետո պահելու հմայքներ, «թալիսմաններ»:

4. Խաղեր. խաղալիքներ զուարճութիւններ, ժամացքի զբաղմունք—երեխաների եւ հասակաւորների համար:

Մանկական խաղեր: Նկարագրել մանկական զխաւոր խաղերը և խաղալիքների նմուշներ հաւաքել (տիկնիկներ, ուտելու խաղալիքներ, գնդակ, հոլ կայլն): Անհրաժեշտ է հին տիպի խաղալիքները տարբերել նորերից: Մանկական խաղերը նկարագրել ամենայն մանրամասնութեամբ և այն իրերի նմուշները տալ, որոնք գործածոււմ են թէ՛ մանուկների, թէ՛ երիտասարդների և թէ՛ հասակաւորների խաղի ժամանակ:

Երիտասարդների ու հասակաւորների խաղերը:

Երաժշտական գործիքների նմուշները հաւաքել (եթէ հնարաւորութիւն լինի, գրի առնել երգերի ու խաղերի բառերը): Հեքեթ ասողներ, աշուղներ, նրանց գործիքները: Նշանակել և նկարագրել հասակաւորների զուարճութիւնները ու խաղերը (նշանակել՝ եթէ որոշ խաղեր որոշ ժամանակ են լինում, բարեկենդանին, կաղանդին, վարդավառին և այլն): Խաղերի մէջ յաճախ են պատահում հին սովորութիւնների մնացորդները: Բարեկենդանի զուարճութիւնները—նկարագրել բոլորը՝ ինչ որ վերաբերում է դրանց: Հաւաքել իրերի նմուշներ:

Երգերով խաղացող խաղեր: Երգեր՝ որոնց ժամանակ փոփոխում են ասողի դիմագծերը, որոնց ժամանակ ասողը պէտք է և միաժամանակ ներկայացնէ իր երգածը, միմիկայ:

5. Ման եւ քաղուս: Նկարագրել ու նմուշներ տալ—գազադ-ների ձևը, հանդուցեալի հագուստը, թաղման ժամանակ հանդուցեալի հետ թողնող իրերի նմուշներ, թաղման ժամանակ գործածող իրերի ու պիտոյքների նկարագրութիւնը, ցուցակը (ոչ եկեղեցական իրերի): Նկարագրել՝ հանդուցեալի դիրքը թաղման կամ այրելու ժամանակ (շատ տեղերում հանդուցեալի դիակն այրում են): Գերեզմանաքարի շէնքը—մօզէլ: Որոշ անհատների (վհուկների, ինքնասպանութիւն գործողների) թաղման միջոցին կատարող ոչ—եկեղեցական արարողութիւնները և դրանց վերաբերեալ իրերը: Նկարագրել և օրինակներ տալ բոլոր այն իրերի, որոնք գործ են անում «հոգեհացի» (քելեխի) հոգեհանդուստի, տարելիցի ժամանակ—նոյնպէս և հագուստներն ու սղի նշանները:

6. Նախապատարմունքներ ու զուտակութիւններ: Ապագան իմանալու, դժբախտութիւնների աւաջն անելու, փորձանքները կասեցնելու, վարակելուց հետո մնալու, կարկտից ու այլ պատահարներից անփնտ անցաւելու պանաղան միջոցները:

Ձոնաղան նշաններ:

Միրահարեցնելու, սրտեր կապելու միջոցներ:

Ձոնաղան տօների ժամանակ Աստուածածինն, վարդափառին, ծննդեան գործ դըռող գուշակութեան միջոցները:

Ագօթքներ ու համայնիներ (իրեր, որոնց կրելը այս կամ այն դէպքում կարող է աղատ պահել չար աչքից, դժբախտութիւնից, որսի ժամանակ յաջողութիւն տալ կային): Ձար աչքից ազատ պահելու մյլ միջոցներ: Կախարդներ, գուշակներ, «Փալ» բացողներ: Ի՞նչ նշաններից կարելի է ճանաչել վհուկին կամ կախարդին:

Կերպարանափոխող մարդիկ, «խորթլաղներ»:

Տան «դօվլաթ», օձ, գորտ:

VIII. Ժողովրդական բժշկութիւն:

Ձոնաղան հիւանդութիւնների ժամանակ գործածող զեղեր: Հիւանդութիւնների ժողովրդական անուան ու նրանց նշանները: Հիւանդութիւնների պատճառը՝ ժողովրդական հասկացողութեամբ: Հիւանդութիւնները կանխելու, հեռացնելու միջոցներ: Հիւանդների խնամքը: Առողջապահութիւն: Ի՞նչ միջոցների են դիմում բնակարանն ու մարմինը մաքուր պահելու: Մազոն: Բազնիքի պարագաներ:

Գրապիտոյքների (դասական պիտոյքների) նմուշներ հաւաքել (ի հարկէ՝ ոչ—գործարանական—թուղթ, գրիչ, այլ՝ ինքնագործող «ղալամ» «միրաքար» կային):